



յարմարութիւնը: Կար դժգոհութիւն, կար դիմադրելու ցանկութիւն: Բայց պակասում էր ուժը: Դիմադրողները հաւասար գէնքեր չունէին:

«Այս իրողութեան վրայ ուշադրութիւն էր դարձրել կոմս Յովհաննէս Լազարեանը, ինչպէս վկայում է Յովակիմ Լազարեանը 1820 թուականին հրատարակած իր մի շրջաբերականի մէջ: Նա հասկացել էր, որ կաթօլիկ վարդապետների դէմ մրցելու համար պէտք է նրանց պէս ուսումնական հոգեւորականներ պատրաստել: Եւ այս միտքը դարձել էր մի լաւ դպրոց բաց անելու շարժառիթներից մէկը: Իր եղբոր հետ համաձայն էր եւ Յովակիմ Լազարեանը» (էջ 22—23):

Նոյն ներածութեան մէջ Լէօն կրկնում է նոյն գաղափարը, ասելով՝ «Յովակիմ Լազարեանը դժիւրում է վեհատիկ, մոռանում է նոյն իսկ որ իր դպրոցը Ս. Ղազարի դէմ մրցող մի հիմնարկութիւն պիտի լինի, խնդրում է Մխիթարեան միաբանութիւնից երկու վարդապետ ուղարկել ուսուցչութիւն անելու համար (ձեմարանում)» (էջ 26):

Իսկ էջ 29-ում ասում է. «Մխիթարեաններից նմանվելու, Մխիթարեաններից դիմադրելու ցանկութիւնը այնքան մեծ էր, որ 1823 թուականին Լազարեանների դպրոցում կազմուեց Հայկական հնութիւնների սիրողների Ընկերութիւնը»: Եւ ապա՝ «Հարկաւոր էր ունենալ եւ սեփական տպարան, ինչպէս ունէին վեհատիկի եւ վիեհայի Մխիթարեանները: Յովակիմ Լազարեանի ժառանգները մի հարուստ տպարան էլ նուիրեցին իրենց ձեմարանին (1829)»<sup>11</sup>:

Բաւականանա՞նք այս մէջը բերումներով: Թո՛ղ ներուժի մեկ ասելու, որ Լէօն այս բացատրութիւնները մենք համարում ենք գրականութեան ո՛չ համապատասխանող ու նաեւ, թուում է, թէ մակերեսային ու ձեւական է:

Լազարեանների հոյակապ տոհմի բոլոր անդամների, սկսած ցեղապետ Ղազար Նազարեան Լազարեանից, կենսագրականների, նրանց կեանքի ու գործունէութեան հետ ծանօթութիւնը չի կարող առիթ տալ նման մի տեսակէտի համար. անհնարին է երեւակայել, որ նրանք իրենց դպրոցական-կրթական գոր-

<sup>11</sup> Բոլոր ընդգծումները մերն են:

ծունէութեան մէջ առաջնորդուած լինեն նման շարժառիթներից թէ ընդհանրապէս եւ թէ մասնակի կերպով՝ «մրցման ու դիմադրութեան կամ Մխիթարեաններին նմանութիւն» մոտիվներից մղուած լինեն:

Այս սքանչելի եւ անուգազական տոհմի բոլոր ներկայացուցիչները այնքան խոր, այնքան լաւ ծանօթութիւն ունէին իրենց ժամանակի հայ իրականութեան շատ ախուր վիճակի հետ, որ միանգամայն ինքնաբերաբար պիտի դային այն համոզումին եւ այն լուսաւոր մտքին, որ միակ միջոցը պայքարելու տիրող մտաւոր խաւարի դէմ՝ դպրոցն է, ուսումնաւոր կրթութիւնն է եւ որ միայն լաւ հիմունքների վրայ դրուած դպրոցի միջոցով է, որ նրանք կարող են զարկ տալ հայ լեզուին, հայ գրին ու գրականութեան:

Այս պարզ մտքին գալու համար նրանք կարեք չունէին ջանալ նմանուելու Մխիթարեաններին: Հայ իրականութիւնը ինքնին ազդակում էր ու պահանջում լոյս ու կրթութիւն:

Բացի այդ, Լազարեանների ազգասիրութիւնը, հայրենասիրութիւնը, նրանց սէրը դէպի ուսումնաւոր կրթութիւնը, նրանց մշտական մասհոգութիւնները լոյս ու կրթութիւն տարածել իրենց հայրենակիցների մէջ՝ կազմում էր նրանց մեծ հոգու բնական պահանջը. դա մի ժառանգական աւանդութիւն էր, որ անցնում էր սերունդէ սերունդ, հօրից որդուն: Արհեստական ոչինչ կար նրանց մէջ. Լազարեանները մի ինքնատիպ ու մոլեռանդ սպասաւորներ էին իրենց սիրեցեալ ազգի:

Նրանց բոլոր կրթական ձեռնարկները բխում էին մի բաղձանքից՝ դարձնել ձեմարանը լուսաւորութեան մի կենտրոն հայ ժողովրդի համար: Եւ նրանք ո՛չ մի ծախսի կամ դժուարութեան առաջ կանգ չէին առնում ոյժ տալու ձեմարանի հեղինակութիւնը բարձրացնելու, գորացնելու եւ ընդարձակելու նրա կրթական դերը: Այս բաղձանքից էր, որ միանգամայն բնականաբար ու տրամաբար էր իրում էր նրանց այս կամ այն կրթական ձեռնարկի նախաձեռնութիւնը:

Թերեւս, արտաքին նմանողութիւն կա՛ր նրանց ու Մխիթարեանների կրթական գրական ձեռնարկների միջեւ, բայց ո՛չ երբե՛ք նմանուելու շարժառիթ:

Այս բոլորով հանդերձ չպիտի մոռանալ, որ թէ կոմս Յովհաննէս Լազարեանը, ձեմարանի հիմնադիրը, եւ թէ նրա բոլոր յաջորդները լաւ կրթուած մարդիկ էին եւրոպական իմաստով:

Իսկ եթէ ի նկատի առնելու լինենք, որ թէ կոմս Յովհաննէս Լազարեանը եւ թէ նրա եղբայրները ապրել են 18րդ դարի երկրորդ կէսին, երբ Փրանսական լուսաւորիչների յառաջադէմ գաղափարները ողողել էին ամբողջ Եւրոպան եւ հասել Եկատերինա Բ. կայսեր գահին, որ Լազարեանները չէին կարող մնալ այդ հսկայ մտաւոր շարժումից դուրս եւ զերծ նրա բարերար ազդեցութիւնից, — ակամայ պիտի դանք նոյն եղբակացութեան, որ Լազարեանները որեւէ պատճառ չունէին իրենց հայեացքները սեւեռած պահել դէպի Ս. Ղազարը եւ ընդօրինակել նրանց, առաւել եւս մրցութեան մէջ մտել նրանց հետ...

Ի վերջոյ, Լէօն, յենուելով աղա Յովակիմի 1820 թ. «Յայտարարութեան վրայ առելու համազգիս», ասում էր, որ կոմս Յովհաննէս Լազարեանը ուշադրութիւն էր դարձրել այն դժգոհութեան եւ դիմադրելու ցանկութեան վրայ հանդէպ Մխիթարեաններին:

Այս մատնանշումը մի կատարեալ թիրամացութեան արդիւնք է, քանզի այդ Յայրենասիրութեան արդիւնք է, քանզի այդ Յայրենասիրութիւն-չրջարեանների մէջ ակնարկ անգամ չկայ այն մասին, որ կոմսը համակուած լինէր նման տրամադրութիւններով...

ԳՂՈՒՅԷ

ԽԱԶԱՏՈՒՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ (1789—1871)  
ԵՒ  
ՄԱՆՈՒԿՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԽԱԶԱՏՐԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ (1844—1850)

Խաչատուր Լազարեանը՝ աղա Յովակիմի երկրորդ որդին՝ ծնուել է 1789 թ. Յունիս մէկին:

Աղա Խաչատուրի պետական ու ազգային հասարակական-կրթական գործունէութիւնը ասեւել է՝ շատ երկար՝ 1801 թ. սկսած մինչեւ իր մահը՝ 1871 թ.:

Զնայած, որ նրա երկու կենսագրիւնները՝ Մ. Մսերեանցն ու Պրոֆ. Զինովեւը, գրել են իրենց երկասիրութիւնները նրա կենդանու-թեան ժամանակ, այսու հանդերձ այս կեն-թեան ժամանակ, այսու հանդերձ այս կեն-սագրականն էլ շատ պակասաւոր է: Կրկին

մեկ օգնութեան են գալիս բարձրագոյն հրօվարտակներն ու հրամանագրերը:

1818 թ. աղա Խաչատուրը եղել է Լազարեան ձեմարանի Հոգաբարձուի՝ իր մեծ եղբոր աղա Յովհաննէսի օգնականը, իսկ վերջինին՝ մահից յետոյ՝ Հոգաբարձու թէ ձեմարանի եւ թէ երկու մայրաքաղաքների Հայոց եկեղեցիների:



Խաչատուր Լազարեան

ձեմարանի Հոգաբարձուի օգնականի պաշտօնը այդ ժամանակ վերացուել է:

Խաչատուր Լազարեանը իր սկզբնական կրթութիւնը ստացել է իր ընտանիքում՝ ծնողների մօտ: Այնուհետեւ պատրաստուել է եւ ասարտական քննութիւն տալով Պետերբուրգի Մանկավարժական ձեմարանում ստացել է 1812 թ. յունիս 15 վկայական, որից երեւում է, որ բացի ընդհանուր կրթական առարկաներից (թուրանութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն եւ այլն) նա սովորել է Փրանսերէն ու գերմաներէն լեզուները, Պետական անտեսագիտութիւն, Հռովմէական եւ քրէական իրաւունքները, բնական օրէնքները, ընդհանուր եւ Ռուսաց վիճակագրութիւն, ժամանակագրութիւն, բնարանութիւն եւ այլն:

Իր ծառայութեան ցուցակից իմանում ենք, որ պետական ծառայութեան է մտել 1801 թ.:

Իր երկարատեւ ծառայութեան ժամանակաշրջանում նա հասել է բարձր աստիճան-

ներին՝ Գաղանի Պետական Խորհրդականի և Կայսերական Դրան Անեկապետի (Կամեր-  
ներ) կոչումը. ստացել է բազմաթիւ շքան-  
շաններ, մեդալներ ու թանկագին նուէր-  
ներ: Բարձրագոյն շքանշաններից յիշատա-  
կենք միայն՝ Ս. Յովհաննու Երուսաղէմաց-  
ւոյ (1816), Ս. Աննայի Ա. աստիճանի (1848)  
և Պարսից Շահից Ասխուծի և Արեգակի ա-  
ռաջին աստիճանը 1853 թ.:

Նաբէղդին Շահի այդ առթիւ տրուած  
հրովարտակի մէջ ի միջի այլոց ասուած է.

«Այդ եղև մեզ, թէ արժանաւորագոյնն  
պատուոյ պերճափառն՝ վեհանճնն Սաշատուր  
Յովակիմեան Լազարեանց, ընդարձակեալ և  
առաւել յոյժ պոյժատացուցեալ է զԱրեւե-  
լեան Լեզուաց ձեմարանն ի Մոսկուա քա-  
ղաքի՝ ... յորում աւանդին մանկանց՝ բաց  
յայլոց դիտութեանց՝ նա և օտար լեզուք,  
Արաբացոց, Պարսից և Տաճկաց. որով և  
հրահանգեալ պատրաստին քարգմանք ըն-  
տիրք և միանգամայն պիտանացուք Պարս-  
կաստանի, որպիսի եղեն որդին և եղբոր-  
որդին գերաստիճան հապայիլ (Ստեփան)  
խանի, որք վարժեցան ի նմին շահարեւ ձե-  
մարանի՝»:

Սաշատուր Լազարեանը եղել է պատուա-  
ւոր անդամ Պետերբուրգի և Մոսկուայի  
ընդհանայ Ընկերութեան, Պետերբուրգի և  
Մոսկուայի Ազատ Տնտեսական Ընկերու-  
թեան, Անդամ Կայսերական Ընկերութեան  
Շինական տնտեսութեան և Փարիզի Ասիա-  
կան ընկերութեան (1847 թ.):

Պետական ծառայութիւնից յիշատակենք  
միայն, որ պաշտօնավարել է Կայսերական  
Դրանում Արտաքին գործոց, Արտաքին դոր-  
ծոց Նախարարութեան մէջ և ապա Ռուս-  
տաճկական պատերազմի ժամանակ գտնուել  
է սուսական բանակում Խորհրդականի պաշ-  
տօնով<sup>2</sup>:

Ազա Սաշատուրի գրեթէ ամբողջ կեանքն  
ու գործունէութիւնը նուիրուած են եղել Լա-  
զարեան ձեմարանին, որի կրթական բարե-  
լաւումն ու նիւթական ապահովութիւնը  
կազմել են նրա մշտական խնամքի առար-  
կաները: ձեմարանի պատմութեան մէջ աւելի  
կը պարզուի, թէ որքա՞ն բեղուն է եղել նրա  
գործունէութիւնը ձեմարանի կեանքի մէջ և  
որպիսի՞ մեծ ծառայութիւններ է նա մա-  
տուցել ձեմարանին ու թողել անջնջելի հե-  
քեր: ձեմարանը նոյնքան մօտ է եղել նրա  
սրտին, որքան որ իր հօր և եղբոր սրտին:  
Նրա այդ ծառայութիւնը գնահատուած է  
եղել ո՛չ միայն ձեմարանի աշակերտութեան,  
ուսուցչութեան և հայ հասարակութեան  
կողմից, այլ և կառավարութեան կողմից:  
Յիշատակենք միայն մի դէպք:

1853 թ. մայիս 20ի բարձրագոյն հրո-  
վարտակի մէջ ասուած է.

«... Յարտաւել Չերմեոանդութիւն Չեր-  
աւ պոյժատութիւն ձեմարանին Արեւելեան  
Լեզուաց... և բազմապատիկ նուիրարեութե-  
թիւնքն առատաձեռնեալք ի Ձէնջ յօղուս  
այսր ձեմարանի՝ արժանի եղեն հանապազ  
Մերում առանձին ուշադրութեան: Յարդե-  
լով Մեր զայդչափ զգոժանի և զբարեփոյթ,  
ճիզն Չեր ի տարածումն լուսաւորութեան,  
... Ամենաողորմածարար պարգևուած եմք  
Ձեզ ... զՇքանշան Ասպետական Կարգի Ս.  
Աննայի ստաճին աստիճանի, զարդարեալ Կայ-  
սերական թագիւ...»:

ձեմարանի կեանքից էլ բերենք միայն  
մի դէպք, որ վճռական նշանակութիւն ու-  
նեցաւ և տուեց ձեմարանին այն կազմա-  
կերպութիւնը, որը այնուհետեւ մնաց ան-  
փոփոխ:

ձեմարանում մինչև 1872 թ. արեւելեան  
լեզուների դասաւանդութիւնը կամ խառն է  
եղել ընդհանուր կրթական առարկաների հետ,  
կամ եթէ գատուել է, բայց կրկին գրեթէ ան-  
կազմակերպ վիճակում է եղել: Միայն  
1872 թ. են բացուած յատուկ մասնագիտա-  
կան դասարաններ արեւելեան լեզուների հա-  
մար, իրենց առանձին Կանոնադրութեամբ,  
ուսուցչական կազմով ու բիւջով:

Մասնագիտական դասարանների նոր  
Կանոնագրի մշակումը, — պատմում է վրա-  
ցերէն լեզուի ու գրականութեան դասատու  
Պրոֆ. Սախանովը — սկսուեց Սաշատուր  
Յովակիմեան Լազարեանի օրօք: Երբ 1871 թ.

դեկտեմբեր 14ին Կանոնագիրը արդէն վերջ-  
նականապէս մշակուած ու պատրաստ էր,  
արդէն կնքել էր իր մահկանացուն այդ մե-  
ծահոգի տոհմի վերջին ներկայացուցիչը:

«Պատկառելի ծերունին միշտ բերել էր  
կենդանի մասնակցութիւն Մասնագիտական  
դասարանների ճակատագրի տնօրինութեան  
մէջ. նա հետեւում էր նրանց կազմակեր-  
պութեան, հոգ էր տանում, որպէս զի իւրա-  
քանչիւր առարկայի ամբիոնը թափուր չմնայ  
և ժամանակին ունենայ իր դասախօսին. ան-  
ձամբ քննութեան էր անում ձեմարանի  
վարչութեան կողմից կազմած դասախօսների  
անուանացուցակը. Պետերբուրգից ուղար-  
կում էր հաշուետուութեան կանոնները,  
վերստուգիչ պալատի կողմից ընդունուած,  
որոնցով ձեմարանը պիտի առաջնորդուէր  
պետական պանձարանից ստացուած գումար-  
ների գործադրութեան հաշուետուութեան  
ներքին գործը կը, որ առաջին ան-  
ժամանակ: Նրա օրօք էր, որ առաջին ան-  
գամ Մասնագիտական դասարանների ծախ-  
սերը իր վրայ առաւ Պետական Գանձարանը,  
յատկացելով տարեկան 18.365 ռուբլի  
90 կոպ. »:

«Սաշատուր Յովակիմեան Լազարեանցը  
գերեզման իջաւ այն ժամանակ, երբ բոլոր  
թիւրիմացութիւնները վերացած էին և Մա-  
նագիտական դասարանների կազմակերպու-  
թեան խնդիրը լուծուած էր ամենայնպէս  
կերպով:

«Հանդուցեալ Հոգարարձուի նախօրօք  
կատարած գիծումի համաձայն, 1871 թ. դեկ-  
տեմբեր 20ին իշխան Սիմէոն Գալիպովիչ  
Աբամբիխի-Լազարեանը հաստատուեց որպէս  
ձեմարանի պատուաւոր Հոգարարձու և այդ  
կոչումը պիտի մնար նրա տոհմի մէջ ժառան-  
գարար մէկ օրը այն անցնելով միւսին »:

Սաշատուր Լազարեանին է պատկանում  
նաեւ մի այլ խոշոր կրթական գործի կեանք  
տալու նախաձեռնութիւնը, որի մասին խօսք  
կը լինի քիչ ստորեւ և որը, ցաւօք սրտի,  
կապուած է մի մեծ դժբախտութեան հետ.  
... Անողորմ ճակատագիրը ո՛չ խնայեց իր վե-  
հանճն ծնողներին ու հարազատներին և ո՛չ  
էլ ձեմարանի բախտը...:

<sup>3</sup> Տե՛ս «Երեսունամեակը Մասնագիտական Գաս-  
արանների Լազարեան ձեմարանի Արեւելեան լեզուաց»,  
սուսերէն հրատարակութիւնը: Մոսկուա 1903, էջ  
XXII + 147. Մէջբերումը՝ տե՛ս էջ 18—19. Ընդ-  
գծումը՝ մերն է:

Դա՛ ձեմարանի նախակրթական դասա-  
րանի բացումն էր, որի անհրաժեշտութիւնը  
վաղուց զգացուած էր և որը իր գոյութեամբ  
գուռ բացարեց նոր հայ շքաւոր մանր երե-  
խաների կրթութեան առաջ:

Սաշատուր Լազարեանի անունը, ինչպէս  
արդէն յիշատակել էինք, կապուած է նաեւ  
ձեմարանի տպարանի հիմնարկութեան ու  
պահպանութեան հետ:

Ինչ վերաբերում է ձեմարանի նիւթա-  
կան ապահովութեան, ապա այդ գործում  
երկու եղբայրների՝ Յովհաննէօի և Սաշա-  
տուրի՝ զոհարեութիւնները, կարելի է ա-  
սել, գերազանցել են տոհմի բոլոր միւս ան-  
դամների նուիրատուութիւնները իրենց ա-  
ռատաձեռնութեամբ:

Լազարեան ձեմարանի 50ամեակի առթիւ  
լոյս տեսած հրատարակութեան մէջ յիշա-  
տակուած են Լազարեան տոհմի անդամների  
կողմից արուած նուիրատուութիւնների գու-  
մարները: Այդ հաշուետուութիւնից երևում  
մարները: Այդ հաշուետուութիւնից երևում  
է, որ 60 տարուայ ընթացքում՝ 1804 թ. մին-  
չև 1864 թ. իրիայն ձեմարանին արուած  
գրամական նուէրները կազմում են մի պատ-  
կառելի գումար՝ 662.782 ռուբլի արծաթ կամ  
չորսը երկու միլիոն ռուբլի թղթադրամ: Այդ  
գումարից Յովհաննէօսին և Սաշատուրին՝  
երկու եղբայրներին բաժին է ընկնում՝  
502.437 ռուբլի արծաթ. բացի 200.000 ռուբ-  
լուց, որ նուիրարեւել է Սաշատուրը ձեմա-  
րանի 50ամեակի առթիւ 1865 թ. ապրիլ 2ին:

Այդ գումարների մէջ, չեն մտնում այն  
անշարժ կալուածների արժէքները, որ նուի-  
րարեւել են Լազարեանները ձեմարանին, եր-  
կու մայրաքաղաքների եկեղեցիների նորո-  
կու մայրաքաղաքների եկեղեցիների նորո-  
կութիւնների համար ինչպէս և նրանց կից  
չէնքերի կառուցման վրայ ծախսուած գրամ-  
ները, տպարանի հիմնարկութեան ու նախա-  
կրթարան դասարանի համար արուած նուէր-  
ների գումարները:

Գալով Սաշատուր Լազարեանի ազգային  
հասարակական գործունէութեան, դժբախ-  
տարար, տեղեկութիւնների բացահայտութեան  
հետեւանքով, քիչ բան կարող ենք ասել:

Մեր ներածութեան մէջ արդէն յիշատա-  
կել էինք Սաշատուր Լազարեանի նամակի  
մի մասը, գրուած Եփրեմ կաթողիկոսին  
1811 թ. յուլիս 6ին: Այստեղ աւելացնենք,

<sup>1</sup> Տե՛ս Մ. Մանուկի «Յիշատակարան», էջ 72,  
Բ. մաս: Ընդգծումները մերն են:  
<sup>2</sup> Մ. Մանուկի «Յիշատակարան», էջ 95,  
Գ. մաս, որ թարգմանարար բերում է «Արեւի ժո-  
ղովանոցից» հետեւեալ հատուածը.  
«Ի պատերազմին (Ռուսաց) ընդդէմ Տաճկաց յա-  
մին 1828, ի Կայսերական Գլխաւոր բնակարանի՝ ի  
սեւաշուքեան Արտաքին գործառնութեանց գտանէր  
Պետական Խորհրդական Սաշատուր Լազարեանց: Ըստ  
բարձրագոյն հրամանի չոգաւ նա ապա ի Մոլդավիա  
և ի Վալաքիա գնաւորան յանձնարարութեամբ»:

որ Յովհաննէսն ու Պաշատուրը խիստ մտա-  
 հոգուած էին ուսուցիչներ պատրաստելու  
 խնդրով Հայոց դպրոցների ու ձեռնարանի  
 համար: Պաշատուրը Լազարեանը այդ խնդրի  
 լուծման միակ միջոցը տեսնում էր նրանում,  
 որ էջմիածինը յանձն առնի հայազէտ ուսու-  
 ցիչներ պատրաստելու գործը:

«Բարեք համարես՞իք — գրում է նա  
 յիշեալ նամակի մէջ — օր մի առաջ այդը  
 դերկոտասան սրամիտ եւ բարեւար մանկախո  
 ընտրել եւ գնուա ի անկեան միում Աթոռոյդ  
 յանձնել ու մենն առաջին բանական եւ ու-  
 սեալ անձին, որ է դպրի, վարդապետի կամ  
 եպիսկոպոսի, իցէ թէ Ներսէս սրբազանին  
 իսկ, զմանկտիան զայնս ի քերականութեան  
 եւ ճարասանութեան լեզուի մերում լաւա-  
 պէս կրթել, ի ստուածարանութեան, պատ-  
 մութեան, աշխարհագրութեան եւ ի տաղա-  
 չափութեան սրբան որ յազգի մերում ի յի-  
 դուի եւ ի մատեանս գտանին»:

Նամակի վերջում հեղինակը յոյս է յայտ-  
 նում, որ Աթոռը ապագայում մեծամեծ  
 օգուտներ կը ստանայ նման մի դպրոցից, —  
 «զի... լաւ եւ պիտանի անդամս, նուիրա-  
 կանս, առաջնորդս, ուսուցիչս, այո՛ եւ հայ-  
 բազմութեան արժանաւոր անձն էք ունե-  
 լոց<sup>4</sup>»:

Մ. Մսերեանի բերած պաշտօնական գա-  
 նազան նամակների ու գրութիւնների ցուցա-  
 կից իմանում ենք, որ երբ 1834 թ. Պետեր-  
 բուրգում կազմուել էր մի կոմիտէ մշակելու  
 Հայոց եկեղեցւոյ սահմանադրութիւնը՝ ա-  
 պագայ «Պօլսթէնիան», Պաշատուր Լազարե-  
 անը նշանակուած է կառավարութեան կող-  
 մից անդամ այդ կոմիտէի:

Այսպէս բոլոր տեղեկութիւնները, որ  
 ունեցել ենք մեր ձեռքի տակ, պարզ ու ակ-  
 նայալանի կերպով, որ այդ գարմանալի տոհմի  
 բոլոր անդամները, սկսած պապից՝ ցեղա-  
 տիպ Լազար Լազարեանից, մինչեւ թոռները,  
 տոհմի վերջին շառաւիղ աղա Պաշատուրը՝  
 նկատուել են թէ կառավարութեան եւ թէ  
 համայն հայ ազգի կողմից, որպէս հարա-  
 գատ ու հեղինակաւոր ներկայացուցիչներ,  
 որոնց կարելի էր դիմել թէ հայցելով խոր-  
 հուրդներ պետական գործերի մասին լինի  
 Ռուսաստանի, լինի հայ ժողովրդին վերա-  
 բերող, թէ նիւթական օգնութիւն եւ թէ բա-

րելսօսութիւն ու միջնորդութիւն զանազան,  
 նոյն իսկ մասնաւոր, անհատական կարիք-  
 ներին բաւարարելու համար: Եւ Լազարեան-  
 ները չէին մերժում ոչ ոքի, չնայած իրենց  
 բազում աշխատանքներին ու հոգերին:

Միաժամանակ աչքի է գարնում նաև այն  
 ջերմ եւ անկեղծ սէրը, յարգանքը, այն հա-  
 մերաշխութիւնը, որ տիրել է այդ գարմա-  
 նահարալ տոհմի բոլոր անդամների մէջ փո-  
 խադարձաբար: Մի կատարեալ նահապետա-  
 կան հայ ընտանիք, ուր ցեղային աւանդները  
 սրբութեամբ պահպանուել են շուրջ 130 տա-  
 րուայ ընթացքին:

Պրոֆ. Զինովեւը, ի միջի այլոց, յիշա-  
 տակում է մի մասնաւոր դէպք, որ իրօք ար-  
 ժանի է ուշադրութեան եւ որը միաժամա-  
 նակ ցոյց է տալիս, թէ հեռուոր հայ գա-  
 դութներում որքա՞ն էր բարձրացել Ռուսաս-  
 տանի հմայքը 1826—1829 թթ. պատերազմնե-  
 րից յետոյ եւ մասնաւորապէս Արեւելեան  
 Հայաստանի սպառնութիւնը պարսկական եւ  
 տաճկական տիրապետութիւնից ինչպիսի՛  
 խոր ու խանդավառ տպաւորութիւն էր թո-  
 դել այդ հեռուոր շրջաններում:

1829 թ. Հնդկաստանում, Սմարան քա-  
 ղաքի բնակիչ ոմն Յովսէփ Յովհաննէս Աւար-  
 խանը գիտնում էր արել Ռուսաստանի Հայոց  
 թեմակալ առաջնորդ Ներսէս արքեպիսկո-  
 պոսին, յայտնելով, որ կամենում է իր ըն-  
 տանիքով եւ հսկայ հարստութեամբ փոխա-  
 գրուել Հայաստան, Ռուսաստանի հովանաւո-  
 րութեան տակ, եւ որ մտադիր է իր հարստու-  
 թիւնը գործադրել յօգուտ իր հայրենակից-  
 ների թէ իր կենդանութեան ժամանակ եւ թէ  
 իր մահից յետոյ, նուիրելով իր եկամուտից  
 տարեկան 5 լաք ոսկի (կէս միլիոն ուրլի),  
 միաժամանակ խնդրում է հաղորդել իրեն  
 որոշ տեղեկութիւններ Ռուսաստանի մասին:

Ներսէսը այդ գրութիւնը ուղարկում է  
 Պաշատուր Լազարեանին. վերջինս կոմս Բե-  
 կենդորֆի միջոցով ներկայացնում է կայսեր՝  
 Նիկոլ Ա.ին Սմարթանի խնդրադիրը:

1830 թ. գեկտեմբեր 3 թուակիր նամա-  
 կով կոմս Բեկենդորֆը յայտնում է Պաշա-  
 տուր Լազարեանին, որ Սմարթանի խնդիրը  
 ներկայացրել է կայսեր որը բարեհաճել է մա-  
 կազրել՝

«Թո՛ղ նա գայ այստեղ, իսկ նրա պահան-  
 ղած տեղեկութիւնները ես ինքս կը տամ  
 նրան, երբ նրան տեսնեմ»:

<sup>4</sup> Տե՛ս 1 էօ, «Պատմ. Երեւանի թեմ. դպրոցի»,  
 էջ 92:

Այնուհետեւ պատմութիւնը լուծ է եւ  
 որեւէ տեղեկութիւն չկայ այդ հայ մեծահա-  
 բուստ մարդու ճակատագրի մասին<sup>5</sup>:

Մի ուրիշ անհատական փոքրիկ դէպքի  
 մասին հաղորդում է Մ. Մսերեանը:

Մի ոմն հայազգի Սարաֆով գիտնում է  
 Պաշատուր Լազարեանցին, խնդրելով, որ նա  
 բարեխօսի կայսեր առաջ թոյլտուութիւն  
 ստանալու ծառայել ուսու կօզակների հեծելա-  
 դունդի մէջ:

Պաշատուր Լազարեանը սիրով բարեխօ-  
 սում է եւ 1828 թ. օգոստոս 6ին ստանում  
 կայսեր բարեհաճ հաւանութիւնը:

Մի դէպք էլ Ղազարոս Աղայեանի կեան-  
 քից:

Պետերբուրգում Աղայեանը շատ ծանր  
 նիւթական վիճակում է եղել: Մի կիրակի  
 օր նա գնում է Հայոց եկեղեցի եւ այնտեղ  
 երգում իր անուշ ձայնով: Պաշատուր Լա-  
 ճարեանին, որ ներկայ է լինում պատարա-  
 դին, շատ դուր է գալիս Աղայեանի ձայնը եւ  
 հրաւիրում է նրան իր մօտ: Աղայեանը ներ-  
 կայանում է եւ ահա՛ ինչպէս է պատմում նա  
 այդ դէպքի մասին իր «Իմ կեանքի գլխաւոր  
 դէպքերը» յուշերում:

«Վեր բարձրացանք փառաւոր սան-  
 ղուղքներով եւ հասանք մինչեւ ընդունարան:  
 Այստեղ գիտաւորեց ինձ բարեսիրտ ծերու-  
 նին (վեհազն Պաշատուր շառաւիղը), որին  
 իր տոհմի վերջին ծերունի շառաւիղը, որին  
 խոր գլուխ տուի, մի հինգ բոսիկ խօսեց  
 ինձ հետ, որ ինձ շատ հաւանել է, եւ  
 հետս, ասելով, որ ինձ շատ հաւանել է,  
 ժուճը երգեմ: — Դուք ոտճիկ կը ստանաք,  
 ասաց, եւ բնակարան, իսկ այս առէք ձեզ առ  
 ժամանակ: Այս ասելով տուաւ ինձ մի նա-  
 մակի ծրար: Ես առայ, գլուխ վեր բերի, եւ  
 մակի ծրար: Ես առայ, գլուխ վեր բերի, եւ  
 գուրս եկայ լուռ ու մունջ: Երբ ծրարը բաց  
 արի, միջին 25 մանէթ գտայ: Նոյն օրը ինձ  
 սենեակ տուին Հայկական եկեղեցու գաւի-  
 թում: Ամսական նշանակեցին 30 մանէթ:

«Վեհազնը եկեղեցու պաշտօնեաներին  
 ստէպ-ստէպ ճաշի էր հրատարակում, ուր զբոսի  
 հայերից ներկայ էր լինում միայն գեներալ  
 Սուլթանշահը: Դուրս գալիս սովորաբար

<sup>5</sup> Հետաքրքրութիւնից զուրկ չէ լինի ստույգել, թէ  
 այս Սմարթանը արդեօք այն Սմարթանն էր չէ, որի  
 հսկայ հարստութեան շուրջ, վերջին պատերազմից ա-  
 ռաջ, այնքան մեծ ազմուկ բարձրացաւ մասուլի մէջ,  
 որ բազում ժառանգներ հանդէս եկան. ամենուրեք  
 եւ նոյն իսկ մի շարք պետութիւններ ցոյց տուին մեծ  
 շահագրգռութիւն:

ստանում էինք եւ ընծաներ մի-մի ծրարով.  
 իմի մէջ սովորաբար 30 մանէթ» (էջ 69—70):

Անշուշտ, նման դէպքեր շատ են եղել  
 Լազարեանների կեանքում, բայց որոնց մա-  
 սին տեղեկութիւն չկայ գրականութեան մէջ,  
 թերեւս պահպանուած լինին նրանց տոհ-  
 մային թղթակցութիւնների մէջ, որոնք  
 գտնուած են Ս. Հայաստանում:

Երբ նման դէպքերի մասին Լազարեան-  
 ների կեանքի մէջ տեղի ունեցած՝ մենք կար-  
 դում ենք, ակամայ մեր միտքը անդրադառ-  
 նում է մեր ժամանակակից հայ պաշտօնեա-



Յովհաննէս Խ. Լազարեան

ներին, որոնք ամենուրեք օտար կառավա-  
 րական շրջաններում ունին բարձր դիրք եւ  
 վայելում են կատարեալ վստահութիւն. ի՞նչ  
 վերաբերմունք են նրանք ի յայտ բերում  
 դէպի իրենց ազգակիցների խնդրանքներին  
 ու կարիքներին: Յաւով պիտի արձանա-  
 գրենք, որ մեծ մասը չի հետեւում Լազա-  
 րեանների օրինակին եւ այդ ո՛չ միայն մաս-  
 նաւոր, անհատական դէպքերում, այլ եւ երբ  
 խնդիրը վերաբերում է ազգային կենսական  
 շահերին... Երկիւղ են քաշում, որ իրենց  
 միջնորդութիւնը՝ իրենց ծառայած կառա-  
 վարութեան մօտ կարող է կասկածներ յա-  
 բուցել իրենց բարեխօսութեան նկատմամբ...  
 5\*



տեսություն: Այդ յօդուածում ասուած է, որ այդ դասարանի Հայոց լեզուի, Ռուսաց լեզուի և թուրքերէնի դասատուն պիտի լինի ծագումով հայ: Այդ դասարանը յատկացուած է այն հայ մանուկներին, որոնք ո՛չ դպրոցական սկզբնական կրթութիւն ունին և ոչ էլ գիտեն ուսերէն: Այդ դասարանը պիտի կրի՝ «նախակրթական բաժին մատուցող հայ երեխաներու կազմակերպիչ» անունը:

Այս նախակրթարանը յիշատակուած պայմաններով ու ծրագրով գործել է մինչև 1917/18 ուսումն. տարուայ վերջը: Այնուհետև, Հոկտեմբերեան յեղափոխութեան հետևանքով ձեւարանի գոյութեանը վերջ տրուեց և ձեւարանը վերածուեց «Հայ Մշակոյթի տան»...:

1887 թ., երբ մենք մտանք Լազարեան ձեւարանի առաջին դասարանը, նախակրթարանի յիշեալ առարկաների դասատուն էր, ձեւարանի նախկին սան, անուանի բանաստեղծ Սմբատ Շահագիրը: Երբ սա 1897 թ. թողեց վերջնականապէս ձեւարանը, նրան փոխարինեց Կարապետ Կուսկիեանը, որպէս Հայոց լեզուի դասատու ու նաև նախակրթարանի դասատու: Այս վերջին պաշտօնը, նրա մահէց յետոյ, ևս ստանձնեցի, որը և վարեցի մինչև 1917/18 ուսումն. տարուայ վերջը:

Երկու խօսքով անդրադառնալով այդ դասարանի պատմութեան, ասենք, որ Շահագիրի օրօք նախակրթարանը բաղկացած էր երկու բաժանմունքից՝ այբբենական, անգրագէտ մանուկների համար, և աւագ բաժանմունքից. երկուսն էլ գետնուած էին մի դասարանի մէջ և ուսուցիչը պարապուած էր միաժամանակ երկու բաժանմունքների աշակերտների հետ:

Հետագայում այբբենական բաժանմունքը գատուեց ու կազմեց առաջին նախակրթարան դասարան, ուր դասաւանդուած էր ձեւարանի վերակացու Ստեփան Տէր-Սարգսեանը:

Իմ օրօք կատարուեց երկրորդ բարենորոգումը:

Նկատելով, որ երկու նախակրթարանների աշակերտները երկու տարուայ ընթացքում ի վիճակի չեն լինում ձեռք բերել բարար չափով գիտելիքներ ու զարգացում, ինչպէս և իւրացնել ուսուց լեզուն, որպէս զի կարողանան յաջող կերպով առաջին դասարանի դասընթացը, որն այդ ժամանակ ունէր շատ բարդ ծրագիր՝ դասաւանդուած էին լատիներէն և հայերէն գրարար լեզուները, բացի ընդհանուր առարկաներից, ևս առաջարկեցի, յատուկ գեղոյց ներկայացնելով ձեւարանի տեսչութեան և Մանկավարժական Խորհուրդին, բացանել նաև միջին նախակրթարանի երկու տարուայ դասընթացը վերածել երեք տարուայ:

Առաջարկս հաւանութիւն գտաւ և բացուեց Միջին նախակրթարան դասարանը յատուկ ծրագրով. այդ դասարանի դասաւանդութիւնն էլ յանձնուեց ինձ:

Այսպէս շարունակուեց մինչև 1917/18 ուս. տարուայ վերջը:

Յիշատակենք, որ աւագ նախակրթարանի դասարանում կատուած էր Մանուկ Յովհաննէսի խղաների նկարը:

(Շարունակելի:)

**ԹՐՆԿԵՐԵԸՆ ԳԵՐԳԵՍՏԵՆԸ**

(Շարունակութիւն և վերջ:)

**3. ԱՆՈՒՆԻ ԹՐՆԿԵՐԵՍՏԵՆԸ**

Գրեգոր Խոճայի Թրնկերեանի առաջին և երկրորդ սերունդի վրայ խօսելի վերջ՝ հարկ կը համարինք հոս շեշտել որ արդէն 1800ի սկիզբը Թրնկերեան գերդաստանի ընտանեկան ծառը իր բազմատարած ճիւղերով ու սողարթալից ստերովը ստացած էր այնպիսի ընդարձակածաւալ մեծութիւն մը, որունց բազմաթիւ անդամները մերթ հոս և մերթ հոն կը յիշուին, յաճախ առանց իրարու հետ մերձաւոր կապ մը մատնանշելու: Կան Թրնկերեաններ, որոնց Թրնկերեան բունին հետ ունեցած մօտաւոր կամ հեռաւոր ազգերը բոլորովին անծանօթ կը մնայ:

Ապացոյց մը չենք գտած, բայց հաւանական է որ Թրնկերեաններն մաս մը ոչ-կաթողիկէ առանձին ճիւղի մը վերաբերի: Աւելի հաւանական է որ Թրնկերեանց Պոլիս գաղթիւնն վերջ՝ այն Թրնկերեան ընտանիքի ուրիշ անդամներ Անկիւրիա մնացած ևս անոնցմէ ոմանք յետոյ հոս հոն ցրուած ըլլան:

Ասիկա կ'ըսենք՝ բացատրելու համար գոյութիւնը անծանօթ մնացած Թրնկերեաններու բաւական մեծ թիւի մը:

Այս գլխոյն տակ պիտի ամփոփենք անունները բոլոր այն Թրնկերեաններու, որոնք որեւէ առթիւ կը յիշուին, բայց անծանօթ կը մնայ իրենց կապը Թրնկերեան ծանօթ տոհմերուն հետ:

1. 1782 Օգոստ. ամսոյն Վենետիկի Միխիթ. Վանքը երկու օր հիւր եղած է Գրիգոր Տնկուեան <sup>68</sup>: Հաւանօրէն նոյն անձն է, որ Ղեւոնդ Թրնկերեանէ Գրիգոր վարդապետ կը կոչուի և է որդի Կարապետի (որդւոյ Գրեգոր Խոճայի):

2. 1819ի Տիւրքիստանի ծանօթ զէպէին առթիւ ձերբակալուած 3 Թրնկերեաններ կը յիշուին. «Միխայէլ, Գրիգոր և Վիլհելմ Աղայի Թրնկերեանց <sup>69</sup>», որոնց մասին ոչ մէկ բացատրութիւն կը գտնենք: Միքայէլը չէ կրնար Յովսէփ Ամիրայի նոյնանուն որդին ըլլալ, քանի որ վերջինս 1807ին ծնած ըլլալով <sup>70</sup> 1819ին տակաւին 12 տարեկան աղայ էր: Գրիգորը կրնայ Սիմոն Թրնկերեանի նոյնանուն որդին ըլլալ, որուն ծնունդի թուականն է 1785, 1827ին կը ներկայանայ իրբեւ տարիքը առած մարդ և Թրնկերեանց պետերէն մին <sup>71</sup>: Իսկ Վիլհելմ Թրնկերեան, Գրիգոր Խոճայի որդի Յովհաննէսի որդին է, ըստ Ղեւոնդի: 1852ին Ֆէրիտի թաղին մէջ ընդարձակ հող մը կը նուիրէ, որուն վրայ Հասունեան Արքեպիսկոպոս կը բարձրացնէ շէնք մը, Անարատ Յղութեան Մայրապետնէրու աղջկանց վարժարանի համար (Յովհաննէս Արք. Նազիեան, Պատմական տեսութիւն Անարատ Յղութեան հայ Գոյրերու Միաբանութեան վրայ. Պէյրուս 1948, էջ 43):

Իր մասին յետոյ:

3. Ինչպէս յիշատակած ենք՝ Գէօրգիան 1815ին Պետրոս Թրնկերեան մը կը յիշէ <sup>72</sup>, որ իր աղջիկը տուած է Արքիմ Պիլեգիկիին: Իր մասին ուրիշ ծանօթութիւն չունենք:

4. Հ. Մահակ Վ. Սրապետի քով ևս կը հանդիպինք Պետրոս Թրնկերեանի մը <sup>73</sup>, որ մեռած է 1856ին և որուն մասին ոչ մէկ տեղութեան կը հանդիպինք:

<sup>68</sup> Գիւլան Վիլհելմ. Միխիթ. 1782:  
<sup>69</sup> Չեռապիլ Վիլհելմ. Միխիթ. Մատենագարանի:  
<sup>70</sup> Հմմտ. Մէճմ. Հով. 1865, թ. 627:  
<sup>71</sup> Տե՛ս Պէյրուսի Թրնկերեան, Պատմ., էջ 190:  
<sup>72</sup> Օրագրութիւն, 1815 Մարտ 14:  
<sup>73</sup> Ս. Յակոբ աղլ. Հիւ., անդ. էջ 445:

5. 1830ին հագիւ կը հնչէ ազատութեան ձայնը՝ Պոլիս գտնուող Հայ Կաթողիկէները կը գումարեն 1830 Ապրիլին անդրանիկ Ազգ. ժողովը և կ'ընտրեն 8 անձեր, որոնք կը կոչուին «Գործակալք Ազգին»՝ վարելու համար ընթացիկ գործերը Հայ Կաթ. Համայնքի: Այդ փոքրիկ ցանկին մէջ է նաև «Թրնկեր Պետրոս» մը, իրբեւ երրորդ անգամը Հայ Կաթ. գերագոյն վարչական Մարմնոյն: Ո՞վ է, ի՞նչ ծագում և կապակցութիւն ունի Թրնկերեան Գերդաստանի հետ — ոչ մէկ ակնարկութիւն կ'ըլլայ նամակի մը մէջ, որ կը խօսի այդ պատմական ժողովրդի վրայ <sup>74</sup>: Իր պատմական արժէքին համար կու տանք ընտրուողներու այդ ցանկը. «1. Ազնաւոր Գէորգ. 2. Հիւսապէրոսի օղլու Պետրոս. 3. Թրնկեր Պետրոս. 4. Խըճի Վիլհելմ. 5. Մալբը Գրիգոր. 6. Պօլուճու Խաչատուր. 7. Արգար Յակոբ. 8. Սաքայեան Միլթոն»:

6. 1803 Յուլ. 13ին Վիեննայի Հայերէն երկու հոգի Տրիեստ Միխիթարեաններուն իրաւերէն նամակ մը կը գրեն, որոնցմէ մէկուն ստորագրութիւնն է Tomaso di Tinghir <sup>75</sup>:

7. 1811ին Հայոց և Յունաց մէջ վէճ կար երուսաղէսի Ս. Յակոբ Վանքի մասին: Յոյները կը ջանային զանազան միջոցներով տիրանալ անոր: Յովհաննէս Պատրիարք աղլ. կարեւոր այս խնդրոյն մէջ յաջողութիւնը ապահովելու համար Առաքել Տատ Ամիրայի միջոցաւ Հայ Կաթ. մեծամեծներն ալ կը հրաւիրէ «միաբանիլ ընդ իւրեանս այս հողերու գործ ազգասիրութեան <sup>76</sup>»: Գումարուած Համագոյցին ժողովին կը մտնակցին Հայ Կաթողիկէներու կողմէ Յովհաննէս Չէլչիի Տիւրքեան, Մոնիսի Միլիս Թրնկերեան, Անտոն Գրեճեան» և ուրիշներ <sup>77</sup>: Հայերը իրենց համերաշխ գործակցութեամբ ու միահամուռ ջանքերով կը յաջողին Սուլթանէն յատուկ հրովարտակ ստանալ թէ Ս. Յակոբ Հայոց կը վերաբերի և ոչ ոք անկէ վերջ իրաւունք պիտի ունենայ խնդիր ընելու այդ մասին:

1811ին Թրնկերեաններ շատ ու շատ կան. անոնց կողմէ իրր ներկայացուցիչ Հայ Ազգ. ժողովրդի մը մասնակցօրը՝ ենթագրել կու

<sup>74</sup> Գիւլ. Վիլհելմ. Միխիթ. 1830 Ապրիլ 10:  
<sup>75</sup> Գիւլ. Վիլհելմ. Միխիթ. 1803:  
<sup>76</sup> Պէյրուսի Թրնկերեան, անդ. էջ 61:  
<sup>77</sup> Անդ.: